

կի մարդիկ կը ճանչնային անոնց՝ իրենց իրաւանց սահմանին մէջ :

Մեր ցուցակէն դուրս են Պարսկաստանի քիւրդ ցեղերը ու Տօրոսի շղթայի վրայ եղածները՝ Կիլիկիայի սահմաններուն մէջ :

## Գ Ը Ջ Ը Լ - Պ Ա Շ Ք Ի Ի Ր Դ Ե Ր Ը

Դրզըլ-պաշ Քիւրդերը կը բնակուին Տէրսիմ և շրջակայքը իրենց հաւանական թիւն է 75,000 : Կը կարծուի որ ունին 15,000 զէնք կրողներ :

Ասոնք ցրիւ եկած լեռներու մէջ՝ կը պատկանին զանազան աշիրէներու, կը միարանին հասարակական աղէտներու առաջ, իրենց պարագմունքն է անասնաբուծութիւն, երկրագործութիւն, արհեստներէն իրենց մէջ աւելի շատ զարգացած է զինագործութիւն : Թիւրք կառավարութեան տակ կիսանկախ վիճակ մը ունին, և զրեթէ ոչ զօրք կուտան ու ո, սուրք. զինուորագրութեան ու հարկահաւաքութեան շատ փորձերը միշտ անպաջողութեան կը հանդիպին :

Այս ցեղերը մշտական պաշարման վիճակի մէջ են. լեռան ստորոտները Օվաճըզ ըսուած տեղ շինուած զօրանոցներով. Տէրսիմը կ'իյնայ Խարբերդի հիւսիսային կողմ, կուսակալութեան կեդրոնէն 12 ժամ հեռաւորութեան վրայ : Միւրքեսարձը կը նստի Խոզայի : Տէրսիմի մէջ կան բաւականաչափ հայ գիւղեր, որոնք արհեստներով կը պարապին, կը պահպանեն քրիստոնէական շատ մը սովորութիւններ : Իրենց մէջ թիւրք բնակիչ չունին :

Տէրսիմի Քիւրդերը կը կոչուին Չազա. ունին լեզուական ուրոյն բարբառ. Տօրոսի շղթաներու վրայ եղածները կ'անուանուին Աւշար :

Աւշարները իրենց լեզուով ու բարբերով աւելի մօտ են Չազաներուն քան ուրիշ Քիւրդերու :